№ 209 Նոյեմբերի 10 (22) 1881 Նոյեմբերի 10 (22) № 209

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Գտարարագրութիւնք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր բաժանորդներին։ — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ֆրանսիայ։ Կ. Գոլսի Միացեալ ընկերութիւն։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։— ՖԵԼԻԵՏՕՆ։

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

—

Հայերի մէջ դեռ ևս տարածված չէ ընթերցասիրութիւնը, հայը դեռ ևս չէ հասկանում որ առանց մտաւոր զարգացման մի ազգ գոյութիւն կարող չէ ունենալ։

Այդ է պատճառը, որ մեզանում կարծում են թէ այն մարդը որ յանձն է առել մի հայոց թերթ հրատարակել, նա ոչ թէ գրգված է ընդհանուր, ազգային օգուտի գաղափարից, այլ մի հայոց լրագիր հրատարակելով իր անձնական կապրիզին բաւականութիւն է տալիս։ Հայը մինչև այժմ չէ հասկանում որ լրագիրը իր յօդուածներով զարգացնում է ժողովուրդը մտաւորապէս, առաջնորդում է նրան իր թէ մտաւոր և թէ նիւթական կեանքի բոլոր երևոյթների մէջ։

Հայը դեռ ևս չէ համարում այրենի լրագրութիւնը մի անհրաժեշտ ազգային ձեռնարկութիւն, այլ մի պատահական գործ, որ այս կամ այն մանաւոր մարդու փանտազիայից է կախված։ Այդ է պատճառը որ երբ որ հայը տալիս է տարեկան 10 ռուբլ լրագրի փոխ, նա այդ չէ համարում մի անհրաժեշտ ծախս իր համար, այլ կարծում է որ բարերարութիւն է անում խմբագրին։ Լրագիր առանալը և լրագրին տարեկան բաժանորդագրութիւն տալը հայը դեռ ևս շռայլութիւն է համարում և ոչ թէ անհրաժեշտութիւն։ Իսկ եթէ նա կարդում էլ է հայ լրագիրը, աշխատում է ձրիապէս կարդալ, իր ծանօթից վերցնել թերթը և խմբագրին օչինչ չը վճարել։

Բաւական չէ որ հայոց ամենօրեայ թերթը չէ կարող պահպանել ամբողջ հայ հասարակութիւնը, այլ այդ թերթի դէֆիցիտը պէտք է ծածկի մի մարդ, ինքն խմբագիրը, որ համ իր անձնական աշխատանք պէտք է տայ, համ էլ հազարներ պէտք է զոհի իր գրպանից, բայց այն հայերից շատերն էլ, որոնք ցանկութիւն են յայտնում լրագիր ստանալու և ամբողջ տարի ստանում են թերթը, դարձեալ շատ անգամ չեն վճարում խմբագրին իրանց պարտքը և ամեն տարի բաժանորդների վրա ահագին ապառիկներ են մնում։

Ահա ինչ դրութեան մէջ է մեր ժամանակակից հայոց լրագրութեան գործը։ Դիմում ենք մեր բաժանորդներին և հարցնում ենք. մինչև ե՞րբ հայ հասարակութիւնը, հայ ազգը անտարբեր կը մնայ դեպի մայրենի լրագրութիւնը, մինչև ե՞րբ ժողովուրդը լուսաւորելու ծանրութիւնը կը մնայ անհատների վրա։ Մինչև ե՞րբ հայոց ազգը չի կատարի իր պարտաւորութիւնը, երբ, վերջապէս, հայերը կը սկսեն հասկանալ որ լրագրութիւնը նոյնքան անհրաժեշտ է մի ազգի համար, որքան օդ ու ջուր մարդու։

Այդպիսի դրութիւն չէ կարող շարունակվել. մի օր կը գայ որ խմբագիրը կը զզվի իւրաքանչիւր տարի համ իր գրպանից ծածկելու թերթի հրատարակութեան դէֆիցիտը, համ էլ նոյն իսկ իր բաժանորդների վրա իւրաքանչիւր տարի ապառիկներ ունենալու։

Որքա՜ն ապնիւ բան։ իմանալ որ խմբագիրը ահագին ծախսեր ունի և մի և նոյն ժամանակ լրագրին գրվելուց յետոյ, չը վճարել տարեկան բաժանորդագինը։

Ուրիշ ի՞նչ անուն կարելի է տալ այդ տեսակ վարմունքին, եթէ ոչ խարեբայութիւն։ Խմբագիրը հաշւում է դիցուք որ 1,200 բաժանորդ ունի և այդ բաժանորդների թւի համեմատ կարգադրում է իր ծախսերը։ Յանկարծ, տարվայ վերջը, տեսնում է որ բացի սովորական դէֆիցիտից, մի երկու հարիւր բաժանորդի վրա ապառիկներ էլ են մնում։

Ամօթ այդ տեսակ ազգին, որ լուսաւորութեան գործի մէջն էլ գործ է գնում խարեբայութիւն, երբ հարցը գալիս է նիւթականին։ Հայը տաս ռուբլու համար էլ պատրաստ է խաբել։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Հայոց Բարեգործական ընկերութեան» անդամների առաջին ընդհանուր ժողովը կայանում է Նոյեմբեր ամսոյ 15-ին, կիրակի 12 ժամին, Արծրունու Թատրոնում, ընկերութեան խորհրդի անդամներ ընտրելու նպատակով։ Անդամ գրվել ցանկացողները թող բարեհաճեն դիմել «Մշակ» և «Մեղու» լրագրների խմբագրատները, նաև Կենտրոնական և Կովկասեան գրավաճառանոցները և Ե. Դատուրեանցի խանութը, իսկ Նոյեմբերի 15-ին նոյն իսկ Արծրունու Թատրոնը։ Անդամների տարեկան վճարն է հինգ ռուբլի։

—

Վրաց Թատրոնական խումբը կրկին անցել է Արծրունու Թատրոնը և կիրակի, Նոյեմբերի 8-ին տուել իր առաջին ներկայացումը այդ թատրոնում։

—

ԲԱԳՈՒԻՑ ստացանք պ. Գէորգ Լալայեանցի ձեռքով 543 ռուբլ բաժանորդագին «Ժուրնալ դ'Օրիանի» համար և նոյն լրագրի համար բաժանորդագին, նոյնպէս Բագու քաղաքից, պ. Ա. Աբէլեանցի ձեռքով 16 ռուբլ։ Առաջին գումարի բաժանորդների ցուցակը կը տպենք առանձին նամակով, իսկ 16 ռուբլ բաժանորդագին տուել են հետևեալ անձինք։ Հայր Բուզաղեան, Պաւլոս Աբելեան, Գաբրիէլ Տէր-Ստեփանեան, Սարգիս Շահունեան, Անաստաս բէկ. Ա. Տէր-Ստեփանեան, Թ. Սաֆարեան, Մ. Տէր-Դրիգորեան, Ա. Միքայէլեան, Ն. Յարութիւնեան, Բ. Չէրքէզեան, Ս. Զարքաչեան, Յովսէփ քահ. Աշուղեան։ Ճանապարհի ծախսը վճարել է Ա. Աբէլեան։ Բաժանորդագրութիւնը շարունակվում է։ Ուրեմն Վիէննայի ֆրանսիական թերթի համար հաւաքված բաժանորդագրութեան նախկին 748 ռուբլ 13 կոպ. գումարի հետ կանի 1307 ռուբլ 13 կոպէկ։ Բայց այժմ, երբ այդքան գումար է հաւաքվում, մենք իրաւունք ունենք յետ դարձնել մեզ այն 500 ռուբլ, որ ուղարկեցինք մեզանից Վիէննայի թերթի խմբագրութեանը, երբ դեռ ևս բաժանորդագրութիւնը սկսված չէր։ Ուրեմն հանելով 1307 ռ. 13 կոպ. գումարից 500 ռուբլ, մնում է մեր խմբագրութեան մէջ դարձեալ 807 ռուբլ 13 կոպէկ։

—

Մեզ գրում են Փարիզից որ Ֆրանսիայի մայրաքաղաքի մէջ հրատարակվող «La Justice» (Արդարութիւն) լրագիրը, որի խմբագիրն է պ. Կլէմանսօ, յանձն է առնում հայոց դատի պաշտպան հանդիսանալ։ Գ. Կլէմանսօ արմատական կուսակցութեան ներկայացուցիչ է և անշուշտ մտիկ ապագայում դառնալու է մինիստր, ուրեմն մեծ նշանակութիւն ունի պաշտպանել հայոց խնդիրը այնպիսի մի թերթի մէջ որ կարող է ժամանակով դառնալ մինիստրական օրգան Ֆրանսիայում։ Բայց հայոց դատը պաշտպանելու համար հարկաւոր է նիւթական միջոցներ, բաժանորդագրութիւն։ Իսկ Թիւրքիայի հայերի վրա ոչինչ յոյս չէ կարելի դնել։ Մենք արդէն բաժանորդագրութիւն բաց արինք Վիէննայի «Ժուրնալ դ'Օրիանի» համար և պատրաստ ենք և «Justice» լրագրի համար էլ նոյնը անել։ Բայց եթէ պատճառն այն է, որ հայը դեռ ևս ըմբռնում է միմիայն ընտանիքի, ազգականութեան գաղափարը, և դեռ չէ ըմբռնում հասարակութեան, ազգութեան գաղափարը։

Երևակայեցէք ձեզ որ մի ազատ տեղ է բացվում մի որ և է հիմնարկութեան մէջ, կամ մի նոր հիմնարկութիւն է հաստատվում, որտեղ ռոճիկով պաշտօններ կան։ Հայը, ի հարկէ, նախ և առաջ աշխատում է ինքն ընտրվել, կամ նշանակվել, ոչ թէ այն պատճառով, որ համոզված է թէ ամեն բանին ընդունակ է, ոչ,—այլ այն պատճառով որ միջոց ունենայ (թէ կուզ սրբում էլ համոզված լինի որ ինքն անընդունակ է), իր ապրուստի համար աւելի շատ փող ձեռք բերել։

Եթէ իրան չէ աջողվում պաշտօնը ձեռք բերել, այն ժամանակ հայը աշխատում է նշանակել տալ այդ պաշտօնի վրա իր մտերիմ ազգականին, կամ այնպիսի մարդուն, որի մասին յոյս ունի թէ կը պահվի իր աղջկայ, կամ իր քրոջ հետ, ուրեմն նոյնպէս ազգական կը դառնայ։

Ուրիշ երկրում, որտեղ հասարակական, ազգային ինքնաճանաչութիւն կայ, մարդիկ այդպէս են մտածում։ «Հիմնարկութիւնը պէտք է օգուտ բերի ամբողջ ազգին, հասարակութեանը, ուրեմն պէտք է լաւ գնայ, իսկ լաւ գնալու համար պէտք է զեկավարված լինի ընդունակ և ազնիւ մարդուց, ուրեմն պէտք է որոնել իմ ազգի, իմ հասարակութեան մէջ մի ընդունակ, ազնիւ անձն, ով և լինի այդ անձը։»

Իսկ մեզանում մտածում են այդպէս. «Ինձ

ՖԵԼԻԵՏՕՆ

Հնագիտական ժողով։—Պրոֆէսոր Խվոլսոնի վարմունքը։—Միքէլաձէ և Երիցեան։—Քիւրքճեանի ֆոտոգրաֆիաները։—Հայերը հնագիտական ժողովի ժամանակ և ժողովից յետոյ։—Ազգութիւն և ազգականութիւն։—Անձնասպան աղջիկ։—Ինչ բան է բարոյական։—Կեանքի պանորամա և իմ գրքոյկը ընթերցողի հետ։—Դէնանք հուսանքի նեսից։—Ամենքին հետաքրքրող մի լուր։—Աշխարհի վերջը։—Շամախու առաջնորդ և երկու Թիֆլիսցի։

—

Ինչքան բաներ, ինչքան երևելի բաներ կատարվեցան Թիֆլիսում իմ վերջին ֆելիետոնից յետոյ։

Բայց, ի հարկէ, վերջին ժամանակ բոլոր կատարված երևելի գործերի մէջ ամենանշանաւորն էր Թիֆլիսի հնագիտական ժողովը։

Ամբողջ Թիֆլիսը մի երկու երեք շաբաթ շարունակ ուսումնական էր դարձել, բոլորն էլ հետաքրքրվում էին պատմութեամբ, հնագիտութեամբ, մեր երկրի անցեալով և այլն։ Ամենքը միմեանց մէջ հաշտ էին, բոլորն էլ սիրով յաճախում էին ժողովի նիստերը, լսում էին աւելի կամ պակաս խելօք զեկուցումները, աւելի կամ պակաս ուսումնական մարդկանց ճառերը.... Բայց յանկարծ մի հրէայ մեզ ամենքիս քիչ էր մնում կուացնում էր միմեանց մէջ։ Պրոֆէսոր Խվոլսոն քաղաքային ճաշի ժամանակ իր ասած ճառի մէջ խօսեց հայերի մասին, առանց մի խօսքով անգամ յիշելու վրացիներին։ Որքան ապիտութիւն, յանդգնութիւն և անզգուշութիւն.... Վրաստանի մայրաքաղաքում չը յիշել վրացիներին....

Վրացիները վրդովված էին, Նրանց ինտելիգենցիայից մինը մինչև այն աստիճան քաղաքավարի գտնվեցաւ, որ նոյն իսկ ճաշի ժամանակ շուացրեց Խվոլսոնին։

Բայց շուտով պ. Միքէլաձէ հայերից և Նրանց պաշտպան Խվոլսոնից վրէժը հանեց, ապացուցանելով որ Արղամանը, Ղարսը և Անին վրաց քաղաքներ են եղել հին ժամանակներում։ Ինչքան պ. Երիցեանն էլ աշխատեց խլել պ. Միքէլաձէի ձեռքից այդ բոլոր տեղերը, բայց նրա ջանքերը չը պակվեցան կատարեալ աջողութեամբ։ Պ. Միքէլաձէ պատասխանեց մի լրագրի մէջ, որ պատրաստ է յետ դարձնել հայերին Ղարսը և Անին, բայց Արղամանը պահում է իր համար։

Բազդաւորապէս այդ արիւնահեղ պատերազմի ժամանակ պ. Քիւրքճեանի ֆոտոգրաֆիաները ապահով տեղումն էին գտնվում, մասամբ առևտրական բանկում, մասամբ էլ «Մշակի» խմբագրատան մէջ, այնպէս որ պ. Միքէլաձէ չը կարողացաւ իր ձեռքը գցել Անիի աւերակների պատկերները և Նրանց վրա յօրինել վրաց արձանագրութիւնները։

Մի քանի խօսք էլ կասեմ հայերին։ Հայերը, որոնք հնագիտական ժողովի ժամանակ վրդովված էին վրացիների վարմունքից, վրդովված էին որ պ. Միքէլաձէ սեփականացրել էր իրան Արղամանը, իսկ պ. Օկրօսմէդէլով աշխատեց ապացուցանել որ վրաց տառերը չէր կարող մի հայ, Մեսրոպ, հնարել, բայց ընդհակառակն, հայերն են երևի փոխ առել տառերը վրացիներից, մանաւանդ որ մինչև այժմս էլ Թիֆլիսի մեր Մեսրոպների մեծ մասը վրացերէն են խօսում, հայերը, որոնք աշխատում էին ուսումնական հիւրերին ամեն բան ինչ որ հայոց է, լաւ կողմից ցոյց տալ,—հէնց որ հնագիտական ժողովի նիստերը վերջացան և բոլոր հիւրերը ցրվեցան, նոյն հայերը ամեն բան մոռացան,—և իրանց փառաւոր անցեալը և հարուստ գրականութիւնը, և գեանի մէջ թաղված ուսումնական գանձերը, և խվոլսոնին իրանց տուած խոստումը գործել, միմեանց մէջ համերաշխ լինել, ուսումնասիրել երկիրը, հետազօտել անցեալը, զարգացնել ժամանակակից գրականութիւնը, նպաստել ազգի ապագայ մտաւոր կեանքի զարգացմանը և այլն, և այլն....

Եւ ահա նոյն հայերը սկսեցին, ինչպէս և հնագիտական ժողովից առաջ, վազել շահի ետևից, ամեն ներելի և աններելի միջոցներով կապկներ վաստակել, ամեն կեղտոտ միջոցներով մեծ առճիկներով հասարակական պաշտօններ ձեռք գցել, ամբողջ գիշերներ կլուբներում թուղթ խաղալ, միմեանց դէմ ինտրիգաներ վարել, միմեանց փոս փորել, միմեանց դէմ ամենատարբեր մատնութիւններ անել, նիւթապէս միմեանց կողոպտել, և այլն, և այլն....

* * *

Ես շատ անգամ եմ առաջարկել ինձ այն հարցը, թէ ինչ է պատճառը, որ հայոց, մանաւանդ Թիֆլիսի հայոց հասարակութեան մէջ ոչինչ բանում չը կայ համերաշխութիւն,—և հասայ այն եզրակացութեանը, թէ այդ տխուր երևոյթի պատճառն այն է, որ հայը դեռ ևս ըմբռնում է միմիայն ընտանիքի, ազգականութեան գաղափարը, և դեռ չէ ըմբռնում հասարակութեան, ազգութեան գաղափարը։

Երևակայեցէք ձեզ որ մի ազատ տեղ է բացվում մի որ և է հիմնարկութեան մէջ, կամ մի նոր հիմնարկութիւն է հաստատվում, որտեղ ռոճիկով պաշտօններ կան։ Հայը, ի հարկէ, նախ և առաջ աշխատում է ինքն ընտրվել, կամ նշանակվել, ոչ թէ այն պատճառով, որ համոզված է թէ ամեն բանին ընդունակ է, ոչ,—այլ այն պատճառով որ միջոց ունենայ (թէ կուզ սրբում էլ համոզված լինի որ ինքն անընդունակ է), իր ապրուստի համար աւելի շատ փող ձեռք բերել։

Եթէ իրան չէ աջողվում պաշտօնը ձեռք բերել, այն ժամանակ հայը աշխատում է նշանակել տալ այդ պաշտօնի վրա իր մտերիմ ազգականին, կամ այնպիսի մարդուն, որի մասին յոյս ունի թէ կը պահվի իր աղջկայ, կամ իր քրոջ հետ, ուրեմն նոյնպէս ազգական կը դառնայ։

Ուրիշ երկրում, որտեղ հասարակական, ազգային ինքնաճանաչութիւն կայ, մարդիկ այդպէս են մտածում։ «Հիմնարկութիւնը պէտք է օգուտ բերի ամբողջ ազգին, հասարակութեանը, ուրեմն պէտք է լաւ գնայ, իսկ լաւ գնալու համար պէտք է զեկավարված լինի ընդունակ և ազնիւ մարդուց, ուրեմն պէտք է որոնել իմ ազգի, իմ հասարակութեան մէջ մի ընդունակ, ազնիւ անձն, ով և լինի այդ անձը։»

Իսկ մեզանում մտածում են այդպէս. «Ինձ

հայոց հասարակութիւնը տար տաս տարի գոյութիւն ունեցող հայոց «Մշակ» լրագրին տարեկան մօտ 2000 բաժանորդ, մենք առանց նորից գիմելու հասարակութեանը, մեր խմբագրական փոդից կոգնէինք և «Justice» լրագրին և թղթակիցներ կը պահէինք արտասահմանում, որոնք կը գրէին եւրոպական լրագիրներում հայոց խնդրի մասին։ Մեր հարուստները ոչինչ չեն անում, ամեն բան մենք պէտք է անենք, մենք, որոնք չատ համեստ, չնչին միջոցներ ունենք։ Թող այդ յիշէ հայոց հասարակութիւնը։ Իսկ Մոսկվա, Ս. Պետերբուրգ, Կ. Պոլիս, Աստրախան, Թիֆլիս, Բագու, Լոնդոն նստող միլիոնատէր հայերը ծաղրում են մեր տրած ջանքերը։ Ցաւում ենք, չատ ցաւում ենք, որ մենք միլիոնատէր չենք. եթէ ոչ մենք ցոյց կը տայինք մեր անտարբեր հարուստներին ինչպէս պէտք է գործել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Նոյեմբերի 4-ին պատգամաւորների ժողովի փոխ-նախագահը բացեց նիստը, յայտնելով, որ ժողովը կատարելապէս կազմակերպված է և հրաւիրեց ժողովի նախագահ Բրիսսօնին իր տեղը բռնել։ Նոր նախագահ Անրի Բրիսսօն, շնորհակալութիւն յայտնելով ժողովին իր ընտրութեան համար, ասաց հետևեալը։ „Դուք ինձ վրա մեծ պարտականութիւն դրիք։ Նախագահական այս բազկաթոռը գրաւել համարձակվելուց առաջ ես պէտք է մռռանամ, թէ ինչպիսի նախորդներ եմ ունեցել։ Նրանց օրինակին հետևելով, ես ևս կը ծառայեմ հանրապետութեանը և ժողովրդին, և յոյս ունեմ, որ ձեր օգնութեամբ կարող եմ կատարել իմ այդ պարտականութիւնը։ Վերջին ընտրութիւններով Ֆրանսիան դարձեալ ապացուցեց, որ նա կամենում է ուժեղ և ազատամիտ կառավարութիւն ունենալ։ Ես կը պաշտպանեմ խօսքի ազատութիւնը ինչպէս խօսողների նոյնպէս և լսողների համար և կը պաշտպանեմ մեր առաջադէմ և խաղաղասէր հանրապետութեան իրաւունքները։ Ցոյս ունեմ, որ դուք միշտ կօգնէք ինձ ձեր համակրութեամբ։“ Այնուհետև նախագահը յայտնեց, որ երեք հարցեր են առաջարկված Ցունիսի գործերի վերաբերութեամբ։ Մինիստր նախագահ Ժիւլ Ֆերրի խօսք պահանջեց և ասաց հետևեալը։ „Ես ցանկանում եմ մեկնել ձեզ, թէ ինչ դրութեան մէջ ենք գտնվում ես և իմ ընկերները այդ հարցերի վերաբերութեամբ։ Այժմեան մինիստրութիւնը, որ բոլոր ժամանակ վայելում էր անցեալ ժողովի հաւատարմութիւնը, միշտ հաւատացած է եղել, որ իր գոյութիւնը պէտք է դադարեցնի նոյն ժողովի գործունէութեան դադարման հետ միաժամանակ։ Ինչպէս ուզում են նայեն վերջին ընտրութիւնների վրա, բայց մենք ինքներս համոզված ենք, որ մինիստրութիւնը պարտաւոր է պատգամաւորների ժողովին և հանրապետութեան նախագահին գործելու ազատութիւն տալ։ Այդ պատճառով մենք անպատճառ հրաժարական կը տանք։ Եթէ մենք մինչև այժմ չենք հրաժարվել, դրա պատճառը չափազանց շատ մեղադրանքներն են, որոնց մենք ենթարկվեցանք, և մեր ցանկութիւնը, որ պատգամաւորների նոր ժողովը իր առաջ պատասխանատու մինիստրութիւն ունենայ։ Խնդրում եմ ամենամօտ օրը նշանակել հարցերը քննելու համար։ Մինիստրութիւնը պատրաստ է պատասխանել։ Պատգամաւորների ժողովի, երկրի և կառավարութեան շահերը պահանջում են, որ գործը չը յետաձգվի։“ Մինիստրի վերջին խօսքերը հաւանութեամբ ընդունվեցան։ Քուէարկութեամբ որոշվեցաւ հետևեալ օրը նշանակել այդ հարցերի քննութիւնը։ Նոյեմբերի 5-ի նիստը աւելի բազմամարդ էր։ Հասարակութիւնը լցրել էր իր համար պատրաստված տեղերը։ Դիպլոմատիական լոժայում նստած էր գերմանական դեսպան իշխան Հոհենլոէ։ Ժիւլ Ֆերրի ասաց հետևալը։ „Կառավարութեանը մեղադրել Ցունիսի քաղաքականութեան համար մի և նոյն է, թէ մեղադրել պատգամաւորների նախկին ժողովը, որ դեռ յուլիսին, երբ սկսվեցաւ Ցունիսի ապատամբութիւնը, իր հաւատարմութիւնը յայտնեց մինիստրութեանը։ Ցունիսի վրա հովանաւորութիւնը անհրաժեշտ է Ֆրանսիայի համար, որովհետև Ցունիսը Ալժիրիայի բանալին է և Ֆրանսիան այնտեղ չի թոյլ տայ ոչ օտարի տիրապետութիւնը և ոչ անիշխանութիւն։ Ֆրանսիական բոլոր կառավարութիւնները այդ տեսակէտից են նայել գործին։ Վերջին տարիներում ապատամբները 2365 անգամ անցել են Ալժիրիայի սահմանները։ Ասում են, որ մենք սխալներ ենք գործել։ Երանի նրան, ով սխալ չէ գործում։ Չեմ կարծում, որ ինձ ընդհատողներն էլ անսխալական լինեն։ Բացի այդ ասում են, որ մենք պատերազմում էինք առանց պարլամենտի համաձայնութեան։ Մենք պատերազմ չենք ունեցել, չենք կռուել բէյի զօրքերի հետ։ Մենք Ցունիս օգնական զօրքեր ուղարկեցինք այն գործը կատարելու համար, որ մեզ յանձնել էր պարլամենտը։ Կազաբսաայիդի դաշնագիրը կապելուց յետոյ Ֆրանսիական զօրքերը յետ կանչվեցան առողջապահական պատճառներով։“ Ժիւլ Ֆերրիի յայտնութիւնների վճռողական և համարձակ ձևը փոփոխեց հասարակութեան տրամադրութիւնը մինիստրութեան վերաբերութեամբ։ Այժմ այլ ևս չեն խօսում մինիստրութիւնը պախարակելու մասին, այլ ամենքը մտածում են Գամբետայի ապագայ կառավարութեան մասին։ Լրագիրները գովում են պատգամաւորների նոր ժողովի նախագահի ճառը։ Բրիսսօն դեռ ևս չէ կարող գսպել զանազան տարրերը, որոնք խանգարում են պարլամենտական վիճաբանութիւնների կանոնաւոր ընթացքին։

Բրիսսօն հանրապետական կուսակցութեան յարգված անդամներից մէկն է։ Նա աւելի նման է Գրեվիին, քան թէ Գամբետային, որովհետև հասարակ մարդ է և ատում է թատրօնական էֆէկտները։ Ամենքը կարծում են, որ նա իր պաշտօնակատարութեան ժամանակ անկողմնապահ կը լինի, իսկ Բուրբոնեան պալատը հաստատ կեանք կը մտցնի։ Ասում են, որ Գամբետա առաջարկեց Բրիսսօնին արդարութեան մինիստրի պաշտօնը, բայց նա մերժեց այդ առաջարկութիւնը և նախապատուեց պատգամաւորների ժողովի նախագահութիւնը։

Կ. ՊՕԼՍԻ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Երէկ Միացեալ Ընկերութեանց կեդրոնական ժողովոյ Իշ. Նիստը տեղի ունեցաւ Ղալաթիոյ կեդրոնական վարժարանին մէջ, նախագահութեամբ Առաքել Ալթունեանի։

Ցիւրի էֆ. և ներկայութեամբ 40-ի չափ երեսփոխանաց։ Առեանն $7^1/_2$-ին բացուելով, վերջին երկու նիստերու առենագրութիւնները կարդացուեցան և վաւերացուեցան։ Դիւանական թղթակցութիւնը կը պարունակէր մի նամակ, զոր Կիլիկեան ընկերութեան վիճակահանութեան հաւաքիչը գրած էր դիւանին, քննութիւն պահանջելով Պ. Ա. Արփիարեանի դէմ, ում կը վերագրէր 72 ռոմանակաց հաշուառութիւնն. յետ երկար վիճաբանութեան, խնդիրը Ցնօրէն ժողովոյ քննութեան յղուեցաւ։ Նախորդ նստին որոշման համեմատ ութ երեսփոխանաց ընտրութեանը ձեռնարկուելով, քուէից բացարձակ առաւելութեամբ երեսփոխան ընտրուեցան Ցեարք Արամ Գավաֆեան, Լևոն Գափամաճեան, Համբարձում Գազարեան, Մաքսուտ Հարէնց, Միհրան Զըպուքճեան, Ստեփան Սուրէնեան, Ցիգրան Տ. Ներսէսեան և Ցիրան Մանուկեան։ Այս քուէարկութենէ յետոյ 13 որոշիչ ձայներու թուոյն խնդիրը նկատողութեան առնուելով, որոշուեցաւ այդ թիւ 14-ի հանել նոր ընտրութեանց պատճառաւ։ Այնուհետև Ցնօրէն ժողովոյ Ատենապետ, Տ. Մինաս Չերազ, խօսք առնելով իւր հրաժարման պատճառները բացատրող բանախօսութիւն մ՚ըրաւ, զոր ընթերցողք պիտի գտնեն լրագրոյս ներքին երեսներուն մէջ. այս բանախօսութիւն, որ մեծ ազդեցութիւն ըրաւ երեսփոխանաց վրայ, կապացուցանէր թէ արդի Ցնօրէն ժողովը, իւր հնգամեայ պաշտօնավարութեան միջոցին, յաջողած է տարեկան 1,300 ոսկի խնայողութիւն և 700 ոսկի հասոյթի առաւելութիւն յառաջ բերել, այսինքն տարեկան 2,000 ոսկի շահեցնել Ընկերութեան, հակառակ իւր դէմ յարուցուած ներքին և արտաքին դժուարութեանց և հակառակութեանց. այս համարատուութիւն ջերմ ծափահարութեամբ ընդունուեցաւ ժողովականներէն։ Տ. Մինաս Չերազ կեդրոնացնէր թէ իւր անձնական գործոց ծանրացումն է պատճառ իւր հրաժարման։ Երեսփոխանաց ամենաստուար մասը պահանջեց մարդուն, ունենալով մի կամ մի քանի հարուստ սիրեկաններ, որոնք նրա համար վճարում են մօդային մագազիններում նրա պատուիրած չքեղ հագուստները։ Նա բարոյական կին է։

Նայիր այդ իշխանուհուն որ անցնում է գեղեցիկ կառքով, լիվրէով հագած ծառայով։ Նրա հարազատ քոյրը վերջին աղքատութեան մէջ, փողոցներում մուրացկանութիւն անելուց յետոյ, մեռաւ խոնաւ մի գետնափորում։ Այդ քրոջը իշխանուհին երբէք չէ ընդունել իր տանը, երբէք չէ օգնել նրան, ոչ ոք էլ չը գիտէր, թէ նա ունի մի քոյր։ Նա բարոյական կին է։

Տեսնում ես ամենքից յարգված այդ մարդուն։ Նա փաստաբան է եղել մի հարուստ մարդու, որի կարողութիւնը իրան է սեփականացրել, պաշտպանելով իր հաւատարմատուի շահերը։ Նա բարոյական մարդ է։

Ահա մօտեցել է քեզ փողոցում մի երիտասարդ։ Նա քաղցր ժպիտը երեսին, սիրալիր կերպով սեղմում է ձեռքդ։ Նա երկու օր սրանից առաջ իր բարեկամին նամակ է գրել քո մասին, համոզելով նրան, որ աշխատի մանել քեզ ուր հարկն է։ Նա բարոյական մարդ է։

Ահա հանդիպում է մեզ մի աբեղայ. Աստուծու սպասաւոր։ Աչքերը ցած գցած, նա անցնում է մեր մօտով «Աստուած օրհնի» ասելով։ Մի շաբաթ սրանից առաջ, այդ մարդը, որ ամեն օր եկեղեցու բեմից արտասանում է «խաղաղութիւն ամենքին» աստուածային խօսքերը, քո մասին ամենաստոր մատնութիւն է արել, մեղադրելով քեզ ամենախիստ յանցանքների մէջ։ Նա բարոյական մարդ է։

ինչ փոյթ հիմնարկութիւնը լաւ գնայ թէ վատ, օգուտ բերի թէ չը բերի ազգին, գլխաւորն այն է որ նոր հիմնարկութիւնը իր պաշտօններով նիւթական արդիւնքի նոր աղբիւր ներկայացնի ինձ, իմ ընտանիքին, իմ ազգականներին։»

Այդ պատճառով ամեն հայ աշխատում է ամեն պաշտօններ ձեռք բերել իր, իր ընտանիքի անդամների, կամ գոնէ իր ազգականների համար։ «Աւելի լաւ է պաշտօնի վրա նշանակել տամ անընդունակ ազգականին, քան թէ առհասարակ ընդունակ հային. մտածում է հայը։ Ինձ ինչ փոյթ որ ազգը օգուտ ունենայ, ինձ հարկաւոր է որ ես, կամ ազգականներս շահվենք»։

Այո, հայի մէջ դեռ չէ ծնված, չէ արմատացած ազգութեան գաղափարը, այլ միայն ազգականութեան գաղափարը։

Բայց որովհետև ամբողջ քաղաքը, ամբողջ հասարակութիւնը, ամբողջ ազգը չեն կարող ազգականներից բաղկացած լինել,— այդ պատճառով հայերը միմեանց մէջ ոչինչ համերաշխութիւն չունեն այնպիսի գործերում, որտեղ չէ կարելի ընտանեկան, ազգակցական շահերը միմեանց մէջ կապել....

Ընդհանուր, հասարակական, ազգային գործերում համերաշխ կերպով կարող են գործել մարդիկ, որոնք բոլորն էլ վառված են մի ընդհանուր ազգային գաղափարով, թէև ոչինչ ազգակցական կապեր միմեանց մէջ էլ չունենային։ Բայց հայերի մէջ դուք չէք տեսնի որ մի ընդհանուր գործ երկար տանելիս լինէին, մի ընդհանուր նպատակով մի տան մէջ հաւաքվելիս լինէին մարդիկ, որոնք միմեանց մէջ ազգակցական կապեր չունենային։

Մեզանում մարդիկ, որոնք ընդհանուր հասարակական գործ են տանում, կամ ծառայում են մի հիմնարկութեան մէջ կամ ազգականներ են, կամ գիտաւորութիւն ունեն ազգականներ դառնալ։

Ազգականական կապերից դուրս չը կան հասարակական կամ ազգային շահեր հայի համար։

* * *

Բայց ես տեսնում եմ որ Ֆէլիեսոնա ծանր է դառնում, սկսում է առաջնորդող յոգուածին նմանվել։ Խօսենք աւելի թեթև և դուրեկան բաների մասին։

Նորերումս մի հայ աղջիկ իրան սպանել է ռէվոլվէրից, որովհետև սիրեկանը խոստացել էր նրան ամուսնանալ նրա հետ և յետոյ, երբ աղջիկը արդէն յղիացել էր, համալսարանական երիտասարդը հրաժարվել է իր տուած խօսքից։

Ի հարկէ շատ լաւ է արել աղջիկը որ սպանել է իրան, եթէ ոչ, ի հարկէ, ամօթ կը լինէր ապրել մի անհարազատ երեխայի հետ։ Ամօթ է, անբարոյականութիւն է, որովհետև աշկարայ է, հրապարակական է։ Հրապարակապէս, պարզապէս մի քանի անել դա վերին աստիճանի անբարոյականութիւն է համարվում մեզանում, իսկ ծածուկ, գաղտնի կերպով ամեն բան կարելի է անել..... Եւ այդպիսով մարդը միշտ բարոյական է մնում։

Պարզ և անկեղծ կերպով սիրել, օրինակի համար,—դա վերին աստիճանի անբարոյականութիւն է։ Իսկ խաբել, կաշառքներ առնել, քանդել, կողոպտել մի քանի ընտանիքներ և նրանց կարողութեամբ հարստանալ, կամ ամենաստոր մատնութիւններ անել մի մարդու վրա, նրան սարսափելի վտանգի մէջ գցելով,—դա բարոյական է, դա շատ բարոյական է, որովհետև ծածուկ է....

* * *

Արի, բարեկամ ընթերցող, ձեռքիցդ բռնեմ և մեզ ածեմ քեզ հայոց հասարակութեան միջով, ինչպէս մի պանօրամայի մէջ, ինչպէս մի մուզէումի մէջ, ամեն բան քեզ ցոյց տալով և բացատրելով։

Տեսնում ես այդ չքեղ տունը։ Նրա տէրը կառուցել է այդ տունը սուտ թղթադրամ շինելով։ Նա յարգված է ամենքից, նա բարոյական մարդ է։

Ահա, տեսնում ես այդ վայելուչ կերպով հագնված, քաղցր ժպիտը երեսին հասակաւոր մարդուն։ Նա թուղթ խաղալու մէջ խաբելով է հարստացել։ Նա բարոյական մարդ է։

Տեսնում ես այդ մարդուն, որ յարգելի դիրք ունի հասարակութեան մէջ։ Նա քանդել է մի քանի ընտանիքներ, կողոպտել է նրանց, նա հարստացել է կաշառքներով։ Նա բարոյական մարդ է։

Ահա անցնում է չքեղ շորերով հագնված մի կին։ Նա ստիպում է իր մարդուն կաշառքներ առնել իր ծառայութեան մէջ, որպէս զի կարողանայ լաւ ապրել և այդ դեռ բաւական չէ. նա ուրիշ կողմից խաբում է իր մարդուն, ունենալով մի կամ մի քանի հարուստ սիրեկաններ, որոնք նրա համար վճարում են մօդային մագազիններում նրա պատուիրած չքեղ հագուստները։ Նա բարոյական կին է։

Նայիր այդ իշխանուհուն որ անցնում է գեղեցիկ կառքով, լիվրէով հագած ծառայով։ Նրա հարազատ քոյրը վերջին աղքատութեան մէջ, փողոցներում մուրացկանութիւն անելուց յետոյ, մեռաւ խոնաւ մի գետնափորում։ Այդ քրոջը իշխանուհին երբէք չէ ընդունել իր տանը, երբէք չէ օգնել նրան, ոչ ոք էլ չը գիտէր, թէ նա ունի մի քոյր։ Նա բարոյական կին է։

Տեսնում ես ամենքից յարգված այդ մարդուն։ Նա փաստաբան է եղել մի հարուստ մարդու, որի կարողութիւնը իրան է սեփականացրել, պաշտպանելով իր հաւատարմատուի շահերը։ Նա բարոյական մարդ է։

Ահա մօտեցել է քեզ փողոցում մի երիտասարդ։ Նա քաղցր ժպիտը երեսին, սիրալիր կերպով սեղմում է ձեռքդ։ Նա երկու օր սրանից առաջ իր բարեկամին նամակ է գրել քո մասին, համոզելով նրան, որ աշխատի մանել քեզ ուր հարկն է։ Նա բարոյական մարդ է։

Ահա հանդիպում է մեզ մի աբեղայ. Աստուծու սպասաւոր։ Աչքերը ցած գցած, նա անցնում է մեր մօտով «Աստուած օրհնի» ասելով։ Մի շաբաթ սրանից առաջ, այդ մարդը, որ ամեն օր եկեղեցու բեմից արտասանում է «խաղաղութիւն ամենքին» աստուածային խօսքերը, քո մասին ամենաստոր մատնութիւն է արել, մեղադրելով քեզ ամենախիստ յանցանքների մէջ։ Նա բարոյական մարդ է։

որ այդ հրաժարական չընդունուի, քանի որ Ցնօրէն ժողովը զոհացուցիչ կերպով վարած էր իւր պաշտօն. Ցնօրէն ժողովը պընդեց իւր հրաժարականին վրա, և վիճաբանութիւնը երկուք ու կէս ժամ տեւեց անընդհատ։ Երեսփոխաններէն շատեր դիտել տուին թէ Ցնօրէն ժողովոյ Առնապետին հրաժարումը կրնար յառաջ եկած լինիլ իւր անձին դէմ լրագրաց մէջ հրատարակուած և հասարակութեան մէկ մասին մէջ տարածուած վիրաւորիչ ակնարկութիւններէ, և թէ ճիշդ այս պատճառաւ պէտք չէր կեդրոնական ժողովոյ մեծամասնութեան վստահութիւնը վայելող վարչութիւն մը զոհել փոքրամասնութեան մը հակառակութեանց, որ միաստակար օրինակ մը կը լինի ընկերութեան ապագային համար։ Բայց Տ. Մինաս Չերազ յայտարարեց թէ իւր հրաժարման մեծագոյն պատճառն է իւր անձնական գրաղմանց աւելնալը։ Ժամը 12-ի մօտեցած լինելով, հարկ եղաւ առեանը փակել, վիճաբանութեան շարունակութիւնը թողուելով յաջորդ նըստին, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի։

(Մասիս)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 28 հոկտեմ.

Պոլսեցի հարուստներու անտարբերութիւնը մասին շատ անգամ դանգատներ հրատարակուած են ձեր թերթին մէջ, մանաւանդ ձեր ընտիր աշխատակից պ. Գրիգոր Նիկողոսեանի կողմէն։ Այսօր նոր ապացոյց մը պիտի տամ այդ ճշմարտութեան, որ ձեր մի Հոսոս փիլիսոփայի ջիղերուն դպած է։

Վիէննայի մէջ հրատարակեալ «Journal d'Orient»-ի խմբագրապետը, պ. Ֆ. Սալ, կը գրէ մի հայազգի բարեկամու։

«Ցաւօք սրտի կը տեսնեմ թէ Կ. Պոլսոյ հայ գաղթականութիւնը շատ յետադէմէ հայրենասիրութեան մէջ։ 150,000 հոգւոյ մէջէն 30 բաժանորդ ունիմ անդ։ Այդքան բազմաթիւ և այդքան հարուստ գաղթականութեան մը համար ծաղրելի է այսպէս օգնել «Journal dOrient»-ին։ Ցանկաստանի մէջ 150 անձեր կան որոնց լրագիր կը յղեմ ձրիապէս 3—4 ամիսէ ի վեր. Նոքա հարուստ հայեր են, այլ բաժանորդ չեն գրուիր, և այսուհետև որ լրագիրս դժուար պիտի մտնէ Ցանկաստան, բնաւ բաժանորդ չը գրուին գուցէ։

Ահա տեսնում ես այդ պատկառելի ծերունի քահանային, ժողովրդի հովին։ Նա կողոպտում է իր նմաններին և ուր հարկն է կաշառքներ է ուղարկում աւագ-քահանայութիւն, կամ կամիլավկա ստանալու համար։ Նա բարոյական մարդ է։

Նայիր այդ ցիլինդրաւոր մարդուն, վերջին մօդայով հագնված։ Նա ադվոկատ է, բժիշկ է. նօտարիուս է։ Նա քեզ ասում է թէ ինքն բէգական, իշխանական ծագումից է, կամ քաղաքացի է. երևանցի է, շուշեցի է.... Բայց իմացիր որ նա քաղաքացի չէ, այլ գիւղացի է և ամաչում է իր ծագումից. Նրա երկու հարազատ եղբայրները Ղարաբաղի այս ինչ գիւղում տըրեխներով են մանգալիս, իսկ հարազատ քոյրը, բոբիկ կոշտացած ոտներով է մանգալիս ու դաշտում աշխատում։ Պարոնը հերքում է որ գիւղացի է, ծածկում է քեզանից իր ծագումը, ամաչում է իր եղբայրներից և քրոջից. որովհետև գիտաւորութիւն չունի նրանց նիւթապէս օգնելու. այլ թողնում է նրանց աղքատութեան մէջ։ Նա բարոյական մարդ է։

Վերջապէս ցոյց կը տամ քեզ մի մարդուն, և գրանով կը վերջանայ իմ հազւագիւտ պանօրաման։ Այդ մարդը իր կեանքի նպատակն է շինել ամէն ինչ որ նոր է, թարմ է, առաջադէմ է իր ազգի մէջ արատաւորել, մեռցնել, մատնել։ Դա ազգասէր հայ է, դա ինքն ազգի բարեբար է և ուրիշ բարեբարների օգնական է, դա բոլոր հայերից յարգված մի անձ է, որովհետև բոլորը, ինչ որ նա անում է ծածուկ է։ Դա հայերի մէջ ամենաբարոյական մարդն է։

* * *

Երևի, սիրելի ընթերցող, յոգնել ես ինձ հետ մանգալով։ Գնանք տուն և հանգստանանք այդ տեսակ յոգնեցնող զբօսանքից յետոյ։ Բայց մինչ տանը, նեղ շրջանում, գիրք կամ լրագիր կարդալով, մասաւորապէս մեզ հարստացնելով՝ վերացական, իդէալական, վսեմ խօսակցութեամբ մենք կարող ենք հանգստանալ.... Ոչ, այդ անհնարին է. ոչ դու, ոչ էլ ես՝ իդէալներ չունենք. մենք անբարոյական մարդիկ ենք։

Աւելի լաւ է հետևենք ընդհանուր հոսանքին. գնանք այս գիշերը կլուբ, ամբողջ գիշերը բթացնենք մեզ թուղթ խաղալով, իսկ վաղը կը մտածենք, ինչպէս ուրիշների օրինակին հետևելով, դառնանք բարոյական մարդիկ, որպէս զի մեր կեանքը ուրիշների շրջանում տանելի լինի։

* * *

Բայց նկատում եմ թէ իմ այսօրվայ ֆիլիսոֆան բաւական տխուր տպաւորութիւն կը թողնի ընթերցողի վրա, եթէ քիչ չը զուարճացնեմ նրան։ Ուրեմն, կը խօսեմ մի լուրի մասին, որ այս բոպէիս ամենքին հետաքրքրում և զբաղեցնում է։

Նոյեմբերի 15-ին աշխարհի վերջանալու լուրը բաւական տարածված է մեր հասարակութեան մէջ։ Եթէ այդ լուրը ստուգվի. ներկայ ֆիլիսոֆան կը լինի, երևի իմ վերջին ֆիլիսոֆան։

Բայց, ինչպէս ասում է «Մշակի» թղթակիցը. ոչ մի տեղ այն ստոյգման չեն հաւատում այդ լուրին, որքան Շամախի քաղաքում։ Մեր թղթակիցը գրում է որ Շամախու սրբազան առաջնորդը նորերումս հաշտվել է իր թշնամու հետ, որովհետև այդ վերջինի մանուկը վախճանվել է։ Թղթակիցը ցանկութիւն է յայտնում որ սրբազանը իր միւս թշնամիների հետ հաշտվի առանց սպասելու որ նրանց երեխաները մեռնեն։ Բայց եթէ Նոյեմբերի 15-ին աշխարհ վերջանալու լուրը ուղիղ յայտնվի,—այն ժամանակ Շամախու սրբազան առաջնորդը, երևի, իր բոլոր թշնամիների հետ կը հաշտվի, որովհետև բոլորն էլ մեռած կը լինեն։

* * *

Աշխարհի վերջանալու մասին խօսելով, յիշեցի մի անցք, որ պատահել է նորերումս «Մշակի» խմբագրութեան մէջ և որ շատ յատկանիշ է թիֆլիսեցի հայի փողասէր բնաւորութիւնը նկարագրելու համար։ Նոյեմբերի 1-ին մտնում է մեր խմբագրատունը մի թիֆլիսեցի հայ։

—Կամենում եմ գրվել «Մշակին» երկու ամսով, այսինքն Նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին. ինչքան արժէ երկու ամսվայ բաժանորդագրութիւնը, հարցնում է նա, դիմելով խմբագրին։

—Երկու մանէթ, եղաւ պատասխանը։

—Շատ լաւ. բայց եթէ Նոյեմբերի 15-ին աշխարհը կը վերջանայ, այն ժամանակ ինչ պէտք է անենք, տարակուսած հարցնում է նոր բաժանորդը։

—Այն ժամանակ մեր ձեզ տուած ապահովագրի հիման վրա դուք ամէն բան կարող էք յետ առանալ մնացածից մի մանէթ ու կէս, պատասխանում է խմբագիրը։

Այդ պատասխանից յետոյ թիֆլիսեցի հայը վճարում է երկու բուբլ և ապահովագիրը ձեռին, հանգստացած դուրս է գալիս մեր խմբագրատանից, համոզված լինելով, որ եթէ աշխարհն էլ վերջանայ, նա կորցնելու չէ իր մեզ տուած 1 բուբլ 50 կոպէկ։

* * *

Մի ուրիշ թիֆլիսեցի մտնում է մի բանկ, որտեղ ունի մի վէկսէլ թափելու։

—Ե՞րբ է վէկսիլիս սրօկը (պայմանաժամը) հարցնում է նա բանկի պաշտօնեաներից մինին։

—Նոյեմբերի 14-ին, պատասխանում է պաշտօնեան։

—Չի լինի որ 16-ին թափիմ....

—Ինչպէս կը կամենաք, բայց այն ժամանակ երկու օրվայ պրոցէնտ պէտք է վճարէք։

—Զուխտա այդիս, համ վէկսիլն էլ կու թափիմ, համ էլ տոկոս կու վճարիմ։ Իս միտք էի անում՝ թէ որ աշխարքը 15-ին չի վերջանայ, իսամ դիմի կու վճարիմ էքսի օրը. ամա թէ որ գրուստ է աշխարքի վերջանալը, ինչպէս որ ասում են,—իսամ ձիր բանկն էլ կու ջնջվի.... Էնչախը ինչ կանիք իմ 5,000 մանէթս, մայնց իմ ջիրուսա մնայ էդ փուղը ու իս էլ, օղլուշդիս հիդ, էս տարվայ թանգութենին դիմանամ։

Այսքան խելք կարող է միայն մի թիֆլիսեցի ունենալ։

ԱՍԻԱՑԻ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բերլինից հեռագրում են ռուս լրագիրներին որ կրկնաքուէարկութիւնների ժամանակ Բերլինի երկու շրջաններում, որտեղ պրոգրէսիստները մրցում էին սոցիալիստների հետ, ընտրվեցան երկու պրոգրէսիստներ. Ցրէգէր և Կլոց։ Նրանց հետ մրցող սոցիալիստներ՝ Ռէբէլ և Հաղէնկլէվէր, թէև շատ ձայներ ստացան, բայց չընտրվեցան։

—Բաղէնի մեծ դուքսը սաստիկ հիւանդ է. դքսութեան կառավարութիւնը յանձնված է ժառանգին։

—Բիսմարկ դեռ ևս գտնվում է իր կալուածքի մէջ։ Լրագիրները հաղորդում են որ նա տրկար է և այս օրերս մի բժիշկ Բերլինից վարցին էր գնացել։

—Իշխան Բիսմարկի իր պաշտօնից հրաժարվելու լուրը դեռ ևս չէ ստուգվում։ Կարծում են կայսր Վիլհէլմ ինքն անձամբ կը բանայ պարլամենտ։ Եթէ Բիսմարկ հրաժարական տայ իր պաշտօնից, պահպանելով միմիայն արտաքին գործերի մինիստրի պաշտօնը, կարծում են որ նրա յաջորդը պետական կանցլերի պաշտօնի վրա կը նշանակվի գիներալ Մանտէյֆէլ. Էլզաս-Լոթարինգիայի նախկին փոխարքան։

—Լօնդոնի լրագիրները հաղորդում են, որ ռուսաց դեսպանը Կ. Պոլսում, պ. Նօվիկով, ռուս-թիւրքական յանձնաժողովի նիստում խիստ կերպով յայտնեց, որ Բ. Դուռը իրաւունք չունի առանձին դաշնագիր կապել թիւրքաց պարտամուրհակների տէրերի հետ, և եթէ նա այդ քայլը կանի, դրանով Բ. Դուռը կը բանդի հոկտեմբերի 3-ին իր տուած խոստումը։ Բացի դրանից պ. Նօվիկով յայտնեց, որ Ռուսաստանը կը հակառակվի թիւրքիայի իր պարտատէրերի հետ կայացրած ամէն տեսակ համաձայնութեանը, եթէ դրա հետ միաժամանակ չի կարգադրվի և Ռուսաստանին զինուորական կոնտրիբուցիայի վճարելու հարցը։

—Վիէննայից հեռագրում են որ Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլայեվիչ հանելով Աւստրիայի մայրաքաղաքը, այցելութիւն ընդունեց աւստրիական կայսրից և Նրան միւս օրը վերադարձրեց այցելութիւնը։ Նոյնպէս Նորին Բարձրութիւնը ընդունեց այցելութիւններ մեծ պետութիւնների բոլոր դեսպաններից։

—Լրագիրներին Լօնդոնից հեռագրում են, հոկտեմբերի 29-ին հետևեալը։ Լորդ Մէրին տուած բանկետում Գլադստոն մի ճառ արտասանեց, որի մէջ յայտնեց թէ գործերի դրութիւնը Իրլանդիայում լաւանում է և կալուածական օրէնքները բարեիզձաբար կը կատարվեն, բացի դրանից գովում էր Ցրանսվաալի հօլանդացի բնակիչներին։ Դրանվիլ յայտնեց, որ անգլիական քաղաքականութիւնը Եգիպտոսում միայն նպատակ ունի այդ երկրի բարօրութիւնը։ Ֆրանսիան Նոյնպիսի կարծիք ունի։ Երկու պետութիւններն ևս պարտաւոր են առանց ետականութեան և փառասիրութեան համաձայնութեամբ գործել։ Իսկ ինչ որ վերաբերում է Ֆրանսիայի հետ առևտրական դաշնագրի կապելուն, Անգլիան այդ դաշնագրին ոչ թէ առևտրական կէտից է նայում, այլ քաղաքական։ Ինքն, հռետորը, շատ կը ցաւէր, եթէ այդ երկու պետութիւնների մէջ եղած բարեկամական յարաբերութիւնները թուլանային։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 Նոյեմբերի։ Էկսպերտների նիստին Նոյեմբերի 5-ին վճռված է. արևմտեան երկիրներում խմիչքների գործի վրա հսկողութիւնը քաղաքների մէջ յանձնել դումաներին, իսկ գաւառների մէջ նոր մասնաժողովներին։ Նոյեմբերի 6-ին վճռված է ոչնչացնել պրօպինացիօնական իրաւունքը։ Վարչական աքսորվածների մասնաժողովը հաւաքվում է իւրաքանչիւր շաբաթ։ Զորս նիստերի ընթացքում քննված են 300 գործեր։ Նոյեմբերի 5-ին Բօսնիայի մէջ ապստամբներ են յայտնվել։ Նոյեմբերի 1-ից հաղորդում են, որ ապստամբութիւնը կատարեալ նահանգում վճռողական բնաւորութիւն է ստանում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 Նոյեմբերի։ Պետական բանկի 5% առմտակը առաջին շրջանի արժէ 95 ր., երկրորդ 91 ր. 75 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 90 ր. 87 կ., հինգերորդ 90 ր. 75½ կ., ներքին 5% առաջին փոխառութեան առմտակը արժէ 220 ր. 75 կ., երկրորդ 214 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան առմտակը 90 ր. 12 կ., երկրորդ 90 ր. 12 կ., երրորդ 90 ր. 12 կ., ոսկի 7 ր. 67½ կ.։ Ռուսաց 1 բուբլ Լօնդոնի վրա արժէ 25,75 պէնս, Ամստերդամի վրա արժէ 130,75 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 219 մարկ։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՆԵՐԻՆԻ